

ԲԱՌԱՅԻՆ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ

ՍՆՆՔԵՐԻՄ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Վերջին տարիներին հայ լեզվաբանության մեջ զգալի աշխատանք է կատարվել տարբեր տեսակի համանունների ուսումնասիրության ուղղությամբ: Նույնը չի կարելի ասել դրանց կիրառական հնարավորությունների բացահայտման մասին, մի կարևոր խնդիր, որը դեռևս առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել:

Բազմազան են համանուն բառերի էության, դրանց դասակարգման մասին գոյություն ունեցող կարծիքները¹: Ումանք համանունների ըմբռնման հիմքում դնում են բառերի գրության, մյուսները՝ արտասանության (հնչման), իսկ ումանք էլ՝ միասնաբար գրության և արտասանության նույնությունը: Դրանցից նախընտրելի է այն ըմբռնումը, ըստ որի համանուն բառերի համար բնորոշ է համարվում արտասանության նույնությունը: Հնչմանը կարևորություն տալու շնորհիվ համանուններ են դիտվում ոչ միայն գրությամբ և արտասանությամբ նույն ձևերը (նույնագիրներ), ինչպես՝ սեր—սեր, այր—այր և այլն, այլև գրությամբ տարբեր, բայց արտասանությամբ գրեթե նույն այսպիսի բառերը՝ հանգ—հանք, շտապ—շտաբ և այլն: Ումանք նույնանուն բառերի ճանաչման հիմքում հնչյունական կողմը դնելով հանդերձ՝ այն կարծիքին են, թե դրանք իմաստով տարբեր, բայց հնչյունական նույն կազմով² բառեր են: Հասկանալի է, որ նման ըմբռնման դեպքում համանունության շրջանակները կարող են սահմանափակվել միայն նույնագիր բառերի համար: Բայց պետք է ընդունել, որ համանունները ոչ միայն հնչյունական նույն, այլև հնչյունական տարբեր կազմով են լինում: Համանուն բառերի համար բնորոշը հնչման նույնությունն է: Դրանց կազմից, բնականաբար, դուրս պիտի թողնել այն նույնագիր բառերը (համագրություններ), որոնք տարբեր արտասանություն ունեն, ինչպես՝ շտեբ (չըստէր)—աչուստա բառի հոգնակին, շտեբ (չըստէր)—աստեիլ բայի ըղձական եղանակի 3-րդ դեմքը, ստեբ (սըստէր)—աստեիլ բայի ըղձական եղանակի 3-րդ դեմքը, ստեբ (ըստէր)—ծովային չափի միավոր և այլն: Նույնը պետք է ասել նաև հարանունների մասին, որոնք հնչմամբ ոչ թե նույն են, այլ որոշ չափով իրար նման են, ինչպես՝ հրձիգ—հրաձիգ, ապրել—ապրիլ, ռեզլամենտ—ռեկլամ, Ավստրիա—Ավստրալիա և այլն: Ումանք հարանունները կոչում են կեղծ համանուններ³:

Ուսումնասիրողները հիմնականում բառագիտական մոտեցումով են բնութագրել համանունները: Նույնիսկ ոճագիտական բնույթի աշխատություննե-

¹ Համանուն բառերի մասին տե՛ս Ռ. Շալունց, Համանուն բառերը ժամանակակից հայերենում («Լեզվի և ոճի հարցեր», հ. 4, Երևան, 1974):

² А. Гвоздев, Очерки по стилистике русского языка, М., 1952, с. 39.

³ Т. Арбекова, Лексикология английского языка, М., 1977, с. 141.

րում համանուն բառերի ըմբռնման հարցում ելակետը միայն բառագիտական է եղել: Համանունների ճանաչման հարցում բառային մակարդակից դեպի խոսքային մակարդակն անցնելու դեպքում ակնհայտ է դառնում, որ նույնահնչունությունը կարող է դրսևորվել ոչ միայն բառերի ու բառաձևերի, այլև բառերի կապակցությունների միջև, հատկապես երբ դրանք հանդես են գալիս ռիթմական ամբողջության մեջ:

Ի՛նչ ես տանջում. կամ թո՛ւյլ եղիր,

կամ արի՛—

կամ հեռացի՛ր, ընդմիշտ գնա՛,

կամ արի՛,

Թե չէ՝ այդպես դու նման ես

չփված,

Բայց ուր որ է գլխիս թափվող

կամարի... (ՊՍ, ԵԺ, հ. 1, էջ 250):

Ընդգծված կապակցությունների բաղադրիչների կապը բավական սերտ է: Ուշագրավ է, որ դրանց մեջ կրկնված ձևով օգտագործված «կամ» շաղկապը բանաստեղծի կողմից շեշտադրված չէ: Դրա նպատակն այն է, որ ընդգծված կապակցությունների և վերջին տողի «կամարի» բառաձևի հնչական ընդհանրությունն ավելի ուժեղ լինի: Կասկածից դուրս է, որ բերված օրինակում առկա են հոանդամ համանուններ, որոնք կարևոր նշանակություն ունեն խոսքի արտահայտչականությունը, բանաստեղծի ռիթմը ուժեղացնելու գործում: Խոսքային միջավայրում ձևավորվող այդպիսի համանունները կարելի է կոչել անհատական կամ կոնտեքստային համանուններ, որոնք կարևոր դեր ունեն գեղարվեստական խոսքում:

Կյանքից հարբած անցավոր,

Ահա դարձյալ անցավ օր

Դու վազում ես դեպի մահ—

Մահը բռնում հանցավոր... (ՀԹ, ԵԺ, հ. 1, էջ 535):

— Գիտե՛մ, գիտե՛մ

Գուշակ է՛լ ես, կախարդ է՛լ ես.

Զէ՛ որ դու ինձ ոտով-գլխով կախարդել ես... (ՊՍ, ՄԱՄ, էջ 82):

Կոնտեքստային համանունությունը, ինչպես բերված օրինակներից էլ զգացվում է, կարող է դրսևորվել ինչպես բառի ու կապակցության (կամարի—կամ արի), այնպես էլ երկու կապակցությունների միջև (կամ արի—կամ արի, կախարդ էլ ես—կախարդել ես):

Վերը նշվածից դժվար չէ մակաբերել, որ կոնկրետ կիրառության մեջ համանունային կապերն ավելի բազմազան դրսևորում ունեն, և բավական պայմանական է համանունները երկու տեսակի բաժանելը՝ բառային համանուններ և քերականական համանուններ: Դրանցից բացի անհրաժեշտ է ընդունել նաև խառը տիպի համանունների գոյությունը, որպես այդպիսին ճանաչելով բառաքերականական (արի—ածական, արի—սգալը բալի հրամայականը), բառակապակցական (անցավոր—անցավ օր) համանունները և այլն:

Սույն հոդվածում ուշադրության են առնվում նաև դրանց կիրառությունները: Համանունների շարքը (խումբը) կարող է կազմված լինել երկու (տատրակ—1. բույսի տեսակ, 2. թռչունի տեսակ), երեք (բուծ—1. կետադրական նշան, 2. բթամատ, 3. ոչ սուր), սակավ դեպքերում չորս և ավելի բառերից (թաղ—1. այգեթաղ, 2. թաղամաս, 3. թուփ (ձմերուկի, վարունգի), 4. կամար): Բայց խոսքում, կոնկրետ կիրառության մեջ սովորաբար երկու համանուններ են հանդես գալիս այս կամ այն արտահայտչական դերով: Սակավ դեպքերում է, որ երեք կամ չորս ձևեր կարող են համատեղ գործածության մեջ դրվել:

Տղէդ դրկէ աղունի,

Մեր հացն շատ աղ ունի.

Լե՛ր խորագէտ օձի պէս՝

Միամիտ զինչ աղունի (ԳԱՏ, 1956, № 12, էջ 111):

Բառական համանունությունը կարող է դրսևորվել բառերի, բառաձևերի և բառերի կապակցությունների միջև: Ինչպես կարելի է նկատել, «բառական համանունություն» հասկացությունն առնվում է լայն առումով: Դա արտահայտվում է ոչ միայն նրանով, որ բառական համանուններ ենք չլիսում բառերից ու բառաձևերից բացի նաև բառերի կապակցությունները, այլև նրանով, որ դրանց մեջ են վերցվում ինչպես բուն բառական, այնպես էլ բառաքերականական⁴ կապակցությունները, երբ համանունությունն արտահայտվում է բառի ուղիղ ձևի և բառաձևի միջև կամ տարբեր խոսքի մասերի պատկանող ուղիղ ձևերով. «Անի»—քաղաքի անուն և «անել» բայի ըղձական եղանակի 3-րդ դեմքը, «շինել» (գոյական)—«շինել» (բայ): Բառական համանուններ են՝ կետ—1. կաթնասուն ջրային կենդանի, 2. նշան, սուր—1. թուր, 2. հատու, անարգել—1. անպատվել, 2. առանց արգելքի: Բառական համանունների մի եզրը կարող է հատուկ անուն լինել՝ ծաղիկ—Մաղիկ, մանուշակ—Մանուշակ, գեղեցիկ—Գեղեցիկ, նվեր—Նվեր և այլն: Եթե համանունության համար բնորոշը արտասանության նույնությունն է, ապա այդ պահանջը բավարարող այսպիսի զուգադիր ձևերը համանուն չհամարել այն պատճառաբանությամբ, թե հատուկ անունների բառային իմաստները չեն բացատրվում և ուրիշ լեզուներով չեն թարգմանվում, ոչ մի հիմք չունի:

Բառերի ձևերից կազմված համանունները առաջանում են երկու կամ ավելի քերականական ձևերից: Օրինակ՝ ջրում—1. չջուր» գոյականի ներգոյական հոլովը, 2. չջրել» բայի անկատար դերբայը, սիրելիս—1. «սիրել» բայի ժամանակային դերբայը, 2. «սիրելի» ածականը աս» հոդով, կտրվի—1. «տրվել» բայի պայմանական եղանակը, 2. «կտրվել» բայի ըղձական եղանակը և այլն:

Առանձին խմբում պետք է դասել բառերի կապակցություններով դրսևորվող համանունները, որոնք խիստ սակավադեպ են: Այդպիսի համանունների

⁴ Քերականական համանունների մասին տե՛ս Ա. Աբրահամյան, Հայերենի քերականական համանունության շուրջը («Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 1), Ն. Պառնասյան, Քերականական համանունները ժամանակից հայերենում, Երևան, 1979:

գործածության հաջողված դեպքեր կան Ստեփանոս Դաշտեցու ստեղծագործություններում.

Կամ Շամիրամ, կամ Արա,
 Կամ ուսուցո, կամ արա.
 Ազնիւ կերպիդ լոյսն միշտ
 Տիւ և գիշէր կամառ այ (ԳԱՏ, 1956, № 12, էջ 113):
 Միշտ լաւ ժիր կաց՝ լաւ արի
 Առ իս լաւ երթ, լաւ արի.
 Բարւոյն ընդդեմ շատ մեղայ՝
 Հենց իմացա լաւ արի (ն. տ., էջ 111):

Վերը նշվածները համանունության անխառն դրսևորումներ են: Խառն համանունները նրանք են, որոնք դրսևորվում են բառի ու քերականական ձևի (բառաքերականական), բառի և կապակցության (բառակապակցական) միջև:

Ես կանչում եմ լալանին.
 Բաղեշխանեն լալ անին.
 Վայ թե հասրաթետ միռնիմ,
 Բլբուկ լիզուս լալ անին.

Դոստիրըս հիռու կանգնին, յադէրըն գան լալ անին (Մն, Խժ, էջ 21):

Ծրկրորդ, չորրորդ և հինգերորդ տողերի համանունները առաջին տողում եղած համապատասխան բառի հետ կազմում են խառը համանուններ:

Այսպիսին է բառական համանունների արտահայտությունը: Բնականաբար դրանց մեջ չեն կարող դասվել միևնույն բառի քերականական տարբեր դրսևորումները (համաձևություններ), ինչպես օրինակ՝ կարդա—1. «կարդալ» բայի ըղձական եղանակի 3-րդ դեմքը, 2. նույն բայի ժխտման դերբայը, խաղալ—1. անորոշ դերբայ, 2. վաղակատար դերբայ և այլն:

Ի՞նչ ոճական, արտահայտչական դեր ունեն բառական համանունները: Ումանք (Բալլի, Բուլախովսկի)⁵ համանունությունն ավելորդ բեռ են համարում լեզվի համար այն իմաստով, որ իբր դա վնասում է խոսքի մատչելիությանը, կարող է խոսքը մոլթ, դժվարըմբռնելի դարձնել: Ընթադրվող վտանգն այդպես չափազանցնելը չէր կարող բացասական դեր չունենալ համանունների հատկապես գեղարվեստական նկատառումներով օգտագործման հարցում և հավանաբար ունեցել է:

Ուսումնասիրողների մյուս մասը (Բուդաղով, Շալունց)⁶ խոսքի հստակությանը սպառնացող լուրջ վտանգ չեն տեսնում համանունների օգտագործման հարցում: Նրանք նշում են, որ համապատասխան խոսքային միջավայրում բավական հստակորեն բացահայտվում են համանուն բառերի տարբեր

⁵ III. Балли, Общая лингвистика и вопросы французского языка, М., 1955, и др.; Французская стилистика, М., 1961; А. Булаховский, Из жизни омонимов («Русская речь», новая серия, III, I, 1928).

⁶ Р. Будагова, Омонимия и значение слова («Сравнительно семасиологические исследования», М., 1963); Լ. Շալունց, նշվ. աշխ.

իմաստները, և չի կարող խոսքն անհասկանալի դարձնող երկիմաստությունն առաջանալ: Եթե մեկուսի վերցնենք «Ափը շտեմավ» նախադասությունը, ապա իհարկե չի հասկացվի, թե խոսքը որ ափի մասին է՝ գետի, ծովի, թե՞ մարդու: Բայց նման պարագաներում անհասկանալի կարող են մնալ նաև համանուն բառ շտեմեցող շատ նախադասություններ: Բավական է բերված նախադասությունն մեջ «ափ» բառի վրա ավելացնել համապատասխան լրացում («Գետի ափը շտեմավ»), կամ այդ նախադասությունն օգտագործենք այնպիսի խոսքային միջավայրում, որ հասկացվի, թե խոսքը վերաբերում է գետի և ոչ թե մարդու ափին, և անորոշությունը իսպառ վերացված կլինի: Նշելով, որ տարբեր նախադասություններում հանդես եկող համանունների օգտագործման ժամանակ էական թյուրիմացություն չի կարող առաջանալ, Ռ. Շալունցը մտահոգություն է հայտնում նույն նախադասության մեջ համատեղ օգտագործվող համանունների վերաբերյալ: Ցանկանալով հիմնավորել նման մտահոգության ավելորդ լինելը, Շալունցը նշում է, թե հայերենում հազվագեղ է լինում, որ «համանուն զույգերը կամ եռյակները հանգես գան բառական միևնույն շրջապատում»⁷: Մեկ այլ դեպքում էլ ավելացնում է, թե այդպիսի հազվագեղ օրինակներ կարելի է գտնել հայ ժողովրդական առած-ասացվածքներում, իսկ «մի շարք հայ հեղինակների ստեղծագործություններում մեզ չհաջողվեց գտնել այդպիսի գեթ մի օրինակ»⁸: Ռ. Շալունցը համանունների համատեղ օգտագործման պատկերն այդպես ներկայացնելու հիմք ունի մասամբ այն իմաստով, որ նկատի չի ունեցել անհատական (կոնտեքստային) համանունները: Բայց բոլոր դեպքերում նրա պնդումը մեզ բավական կտրուկ է թվում:

Համանունների ոճական արժեքը ոչ թե առանձին, իրարից անկախ նախադասություններում, այլ համատեղ գործածություններում է դրսևորվում: Դա վերաբերում է ոչ միայն այն համանուններին, որոնք հակադրվում են գործառական, տերիտորիալ և այլ հատկանիշներով, այլև նրանց, որոնք ոճական սկզբունքով են հակադրվում: Որպես վերջին տեսակին պատկանող համանուններ են համարվում այն կապակցությունները, որոնք պատկանում են լեզվի տարբեր շերտերին և ունեն գործածության տարբեր ոլորտներ, որոնց անդամներից մեկը (կամ երկուսը) պատկանում են կամ բանաստեղծական կոչվող, կամ հազվագեղ կիրառվող բառերի խմբին⁹: «Բարձրագույն Աբուլն ու Մթին սարեր / Մեջք մեջքի տված կանգնել վեհափառ, / Իրենց ուսերին, Զավաթից էլ վեր / Բռնած պահում են մի ուրիշ աշխարհ» (ՀԹ, ՆԺ, հ. 1, էջ 292), Ասում են, թե դու արդեն բանաստեղծ ես, բարձրագույն» (ՀՇ, Յ, էջ 135): Ժիշտ է, որ ընդգծված բառերն ունեն ոճական արժեք, խոսքն օժտել են հանդիսավորությամբ: Բայց դա ոչ թե այն բանի շնորհիվ, որ համանուններ են, այլ որ համանունության կապերից դուրս էլ, ի տարբերություն իրենց հոմանիշների, օժտված են խոսքի հանդիսավորությանը նպաստելու կարողությամբ: Ուրեմն՝ բերված կիրառություններում համանուն բառերի ոճական արժեքը բնավ էլ համանունության հողի վրա չի դրսևորվում: Վերցնենք սովորական, առօրյա խոսքում օգտագործվող համանունների օրինակներ՝ ցա-

⁷ Ռ. Շալունց, նշվ. աշխ., էջ 52:

⁸ Նույն տեղում, էջ 51:

⁹ Նույն տեղում, էջ 42:

նել—1. հնարագիտությամբ մեկին իրենից հեռացնել. «Հորեղբայր, դու ուղում ես ինձ ցանել...», 2. սերմանել. «Նա կուզենար գեղեցկություն ցանել ծաղկի պես և հիանալ նրա աճը տեսնելով»։ Այստեղ էլ առաջին նախադասության մեջ ընդգծված բառի արտահայտչականությունը պայմանավորված է ոչ թե նրանով, որ համանուն է, այլ որ ինքն իրենով, համանունության կապերից դուրս էլ օժտված է համապատասխան հասարակաբանական երանգով։ Այլ բան է, եթե «բարձրագահ», «ցանել» բառերի նույնանուն ձևերը օգտագործված լինեին նույն նախադասության կամ ուրիշ ամբողջություն կազմող կից նախադասությունների մեջ։ Այդպիսի կիրառությունների դեպքում դրանք կարող էին, որպես համանուն բառեր, օժտվել ոճական, արտահայտչական դերով։ Այդպես է, որովհետև, ինչպես արդեն նշվել է, համանուն բառերի ոճական արժեքը հիմնականում նույն կամ կից նախադասություններում է դրսևորվում։

Ա՛խ, եթե անգամ քարե սիրտ ճարվի՝
Մարդկային սրտում բա կրա՞կ կարվի...
Ո՞րտեղ եք տեսել, որ թել-ասեղով
Կտրված երակ վերստին կարվի... (ՊՍ, ԵԺ, հ. IV, էջ 81)։

Անի՛, Անի՛, ախ՝ Անի,
Քանդողիդ տունը քանդվի,
Քեզ որ ազգը չպահեց,
Մեկ լաց ընող ի՞նչ անի (ՄՀՔ, հ. II, էջ 15)։

Կասկածից դուրս է, որ բերված օրինակներում, որպես ուժեղ հանգավորման, խոսքի թարմությանը նպաստող միջոց, համանուններն օժտված են արտահայտչական որոշակի արժեքով, թեև ոճական որևէ երանգավորում ունեցող բառեր չեն։ Արտահայտչականությունը պայմանավորվել է համանունների համատեղ օգտագործման շնորհիվ։ Այդպիսի կիրառություններում համանունները հանդես են գալիս որպես նպատակադիր վերաբերմունքի արտահայտություն։ Եթե համանունների այլ գործածությունների դեպքում խոսողը (գրողը) ընդհանուր առմամբ նկատի չի ունենում, որ լեզվում գոյություն ունի տվյալ բառին համահունչ այլ բառ, ապա այս դեպքում գրողը, բանաստեղծը իր խոսքը կառուցելիս ելնում է հենց համանունության առկայության փաստից, հենց դա է դարձնում արտահայտչականության հիմք։

Համանունների ամենահատկանշական կիրառությունը համարվում է բառախաղը։ Համանուն և բառախաղ հասկացությունները հաճախ այնքան սերտ առնչությամբ են օգտագործվում, որ կարող է այն թյուր տպավորությունը թողնել, թե համանունների բոլոր համատեղ գործածությունները բառախաղ են առաջացնում։ Համանուններով առաջացող բառախաղի համար կարևոր նախապայման պետք է համարել խոսքի այնպիսի երկիմաստությունը, որը երգիծական երանգ է ունենում. «Զգիտի տառերը հեգեվ, բայց տես դու՝ կարդում է Հեգեվ» («Ռեզի», 1971, № 3), «Ես աղա, դու աղա, մեր աղունը ո՞վ աղա» (ԱՂ, ՀԱ, 1951, էջ 73)։ Ընդգծված համանուններով բառախաղ է ստեղծված։ Խոսքի արտահայտչականությունը, որ դրսևորվում է որպես երգիծական

երանգավորում, պայմանավորված է այդ բառախաղով: Համանունների այսպիսի բառախաղային գործածությունն այնքան էլ տարածված, կենսունակ չէ: Համատեղ օգտագործվող համանունների դերը մեծ է հանգավորման հարցում, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հանգեր ստեղծելու իմաստով: Իրար մոտ կամ նման հնչյունական խմբերով հանգեր ստեղծելը հեշտ է, անհամեմատ դժվար է, երբ հանգավորումը կատարվում է նույն հնչյունական խմբով, այսինքն՝ համանուններով: Բացի դժվարությունը՝ համանուններով ստեղծված հանգերը կարող են խոսքը միօրինակ դարձնելու վտանգ պարունակել: Վերջին հանգամանքը զգալիորեն շեղոքացվում է, երբ հանգավորման մեջ են բերվում ոչ թե նույն, այլ տարբեր ձևաբանական արժեք ունեցող բառաձևեր, որոնք ներքին իմաստային հաճելի բաղմազանություններ են հատկանշվում:

Ու շար թե բարի,
 Խոցող թե անցավ
 Ե՛վրս տասներկու բոլորակ տարի
 Զեմարանի մեջ եկավ ու անցավ... (ՊՍ, ԱԶ, էջ 44):
 Հրդեհը մարեց ու հողմը անցավ,
 Արդեն նայում ես դու ցավին անցավ (ՄՄ, ՁԶ, էջ 21):

Հանգավորման միօրինակությունից, բացարձակ նույնությունից խուսափելու համար է, որ բանաստեղծներն ավելի շատ տարբեր, քան նույն գրություն ունեցող բառերով են հանգեր ստեղծում:

Ու ես անհապաղ
 Անջատում եմ ինձ
 Աշխարհից ծանոթ
 Ու պարպում եմ ինձ,
 Ու դարձնում մի անոթ,
 Որ լոկ դատարկ չէ,
 Այլ նաև անօդ... (ՊՍ, ԵԼ, էջ 7):

Եվ բնագդորեն նա սիրտն է բռնում սև սքեմի տակ
 Եվ սիրտն է սեղմում ափերով իր տաֆ... (ՊՍ, ԵԺ, հ. IV, էջ 32):

Ավելի հաջող է ստացվում, երբ հանգավորումն ապահովվում է խառը համանուններով, այսինքն՝ բառական և կապակցական համանունների օգտագործումով: Նման դեպքերում հանգն ավելի հարուստ է լինում.

Եվ, հակառակ իր իսկ կամփին,
 Մի կաքավող աղջիկ կամ կին,
 Ա՛խ, Վարդապետ,
 Մինչև անգամ վարդապետին կուսակրոն
 Հիշել կտա... պիղծ մի ջաննաթ՝
 Մեր անալի դրախտի տեղ... (ն. տ., էջ 125):

նա դուստինն է, սա տանին.
Ըղնա թողնին, սա տանին.
Լեզուն ուրիշ, սիրտն ուրիշ.
Աշակերտն է սատանին.... (ԳԱՏ, 1956, № 12, էջ 112):

Տարբեր տեսակի համանունները բավական աշխույժ կիրառություն ունեն ժողովրդական խաղիկներում, բայաթիկներում, քառյակներում: Խ. Աբովյանի բայաթիկներում շատ կան համանունների տարբեր տեսակներով հանգավորված հաշող օրինակներ.

Բարեկամիդ հետ մեկ տեղ
Թող քեզ սպանեն՝ ախ՝ մեկ տեղ.
Անբարեկամ որ մեռնիս,
Հողն էլ չի տալ քեզ մեկ տեղ... (ԽԱ, ԵԼԺ, հ. I, էջ 190):

Սարի ձեռք ընկա, շաբի,
Թե սպանի էլ, ինձ էրի,
Ո՞ւմ զնամ ասեմ իմ ցավս,
Ի՞նչ ասեցիր, ես շաբի... (Ն. տ., էջ 192):

Աբովյանը մի շարք դեպքերում համահնչունություն է ստեղծում առանձին բառի և համապատասխան հարադիր բարդության մեկ բաղադրիչի միջև: Այսպես՝ հետևյալ քառատողերում նման համանունություն է ստեղծված «քաշել», «լալ» բառերի և «ախ քաշել», «սուգ ու լաց» հարադիրների համապատասխան բաղադրիչների միջև.

Սիրտս պատկեր չի, քաշեմ,
Քեզ տամ, ինձ էլ չմաշեմ,
Միս ա, թուր էլ խփում ես,
Ի՞նչ անեմ, ախ չի ՔԱՇԵՄ... (Ն. տ., էջ 188):

Լա՛ց իմ օրս, ա՛ղիդ՝ լա՛ց,
Երբ դաս տեսնես ինձ մեռած:
Շատ էլ հասրաթդ քաշեցի,
Ինձ սպանեց սուֆն ու ԼԱԳ... (Ն. տ., էջ 189):

Խ. Աբովյանն առանձին դեպքերում ընդարձակում է կոնտեքստային համանունների մեջ ընդգրկվող բառերի կազմը՝ հասցնելով երեքի: Դրա շնորհիվ հանգը հարուստ է լինում, խոսքը՝ առավել երաժշտական.

էն տանը մեռնիմ, ախ էն տան,
Որ աչքդ բացիր՝ աննման:
Մեկ բուռը հողիդ եմ կարոտ,
Ասա՛, որ ինձ ախ՝ էն տան (Ն. տ., էջ 188):

Գեղեցիկ, արտահայտիչ է թվում տողասկզբի օգտագործումը, որի շնորհիվ տողի սկզբի մասն է ավելի կարևոր դառնում, այդ մասում էլ են հանգավորվում տողերը՝ առաջացնելով կրկնակի հանգ։ Առանձին դեպքերում համանուններից մեկը հանդես է գալիս տողի (նախադասության) սկզբում, իսկ մյուսը՝ վերջում և դրանով ասես մի տեսակ շրջանակում են արտահայտությունը՝ այն դարձնելով թարմ, ուշագրավ։

Կանգուն առ կանգուն թաղվելով հողում՝

Հառնեցինք գարձյալ, մնացինք կանգուն... (ՊՍ, ԵԺ, հ. IV, 263)։

Միտք եմ անում, թե ի՞նչ անեմ, ո՞ւմ վագրենի սիրտն հանեմ,

Որ անդադաւ խաղաղ մնա այս աշխարհը անդադաւ (ՀՇ, Յ, էջ 85)։

Վերևում նշվել է արդեն, որ համանունների ո՛չ առանձին, ո՛չ էլ համատեղ օգտագործումը չի կարող խոսքի անհարկի երկիմաստության, մթամածության պատճառ դառնալ, եթե անհրաժեշտ զգուշություն ցուցաբերվի։ Բայց առանձին դեպքերում, այնուամենայնիվ, նույնիսկ խոսքի հմուտ վարպետների ստեղծագործություններում կարող են տեղ գտնել անհաշող գործածության դեպքեր։ Համանունների ոչ այնքան հաջող օգտագործման պատճառով է, որ Պ. Սևակի վաղ շրջանի ստեղծագործություններից մեկի այս հատվածի միտքն այնքան էլ հստակ չի ստացվել։

Պետք է... մի հա՛րկ,

Ուր ճա՛րկ չկա

Խաղալ, թե Թարա պես լավ հարկ չկա՞ն։

Մի ճա՛րկ, ուր իսկապես չկա կեղտի նշույլ,

Եվ ո՛չ երբեք մի ճա՛րկ,

Որտեղ մութ անկյուն են կեղտը քշում՝

Հանուն ըն-տա-նե-կա՛ն սուրբ մաք-րու-թյա՛ն...

(ՊՍ, ԵԺ, հ. III, էջ 136)։

Այսպիսով, համանունների ոճական գործածությունը, որ բնորոշ է գեղարվեստական խոսքին, հիմնականում պայմանավորված է դրանց համատեղ գործածությամբ։ Առանձնապես մեծ է դրանց դերը բառախաղերի, հնչմամբ նույն, իսկ բովանդակությամբ տարբեր բառերի հանգավորում պահանջող չափածո երկերի ստեղծման գործում։ Բառական կապակցությամբ կամ դրանց մասնակցությամբ ստեղծված համանունները, որոնք կարելի է կոչել անհատական կամ կոնտեքստային համանուններ, կարևոր նշանակություն ունեն խոսքի թարմությանը նպաստելու, բանատողերի ռիթմը ուժեղացնելու գործում։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԻ, ԵԺ—Ավ. Խաճակյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1973։

ԱՂ, ՀԱ—Ա. Ղաևալանյան, Հայկական առածանի, Երևան, 1951։

ԳԱՏ—ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գլխ.։

ԽԱ, ԵԺ—Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, 1948։

- ՀԲ, ԵԺ—ՀԵՎԵ. Բուսմանյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1950.
 ՀՇ, Յ—ՀԵՎԵ. Շիրադ, Յոթնապատում, Երևան, 1977.
 ՀՍ, ՔԵ—Հ. Սանյան. Քարափների հրգը, Երևան, 1968.
 ՄՀԲ—«Մարգարիտների հայ քնարերգության», հ. II, Երևան, 1974.
 ՄՄ, ԶԶ—Մ. Մարգարյան, Չնհայից հեռու, Երևան, 1965.
 ՊՍ, ԱԶ—Պ. Սևակ, Անլուրի զանգակատուն, Երևան, 1959.
 ՊՍ, ԵԺ—Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. I, III, IV, Երևան, 1972, 1973.
 ՊՍ, ՄԱՄ—Պ. Սևակ. Մարդը ափի մեջ, Երևան, 1963.
 ՊՍ, ԵԼ—Պ. Սևակ, Եղիցի լույս, Երևան, 1971.
 ԶԲ—«Զիվանու քնարը», Երևան, 1959.
 ՍՆ, ԽԺ—Սայաթ-Նավա, Խազերի ժողովածու, Երևան, 1959.
 Ն. տ.—Նույն տեղում:

ИСПОЛЬЗОВАНИЕ ЛЕКСИЧЕСКИХ ОМОНИМОВ В ХУДОЖЕСТВЕННОЙ РЕЧИ

СЕНЕКЕРИМ МЕЛКОНЯН

Р е з ю м е

Стилистическое использование омонимов характерно для художественной речи и в основном обусловлено их совместным употреблением. Роль лексических омонимов не ограничивается только созданием ка-тамбуров. На основании анализа богатого материала они рассматриваются как важное поэтическое средство для усиления общей рифмовки стиха, придания выразительности художественной речи. Омонимы используются также в стихотворениях особого типа (течнис).